«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ
"ARMENIAN WATER AND SEWERAGE" CJSC

www.armwater.am

ՀՐԱՎԵՐ

02.09.14 N: ՀՋԿ-03/1953 "Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ-ի կարիքների համար՝
**հանդերձանքի** ձեռքբերման

Ձեր N: ____________________

Հարգելի տիկնայք և պարոնայք

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10»** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ***"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ***-ի (այսուհետև՝ Գնորդ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ***ապրանք:*** Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում ***«ՀՀՏԿՆՁՏԳԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/10-14/40»***:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ***ք.Երևան, Վարդանանց փակ.8, 6-րդ հարկ*** հասցեով, մինչև 2014թ. սեպտեմբերի 15-ը, ժամը՝ 15:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար *Անդրանիկ Մանուկյանը*: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ***ք.Երևան, Վարդանանց փակ.8, 6-րդ հարկ*** հասցեում, 2014թ. սեպտեմբերի 15-ին, ժամը՝ 15:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում ***"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ***-ի կարիքների համար՝ ***բանվորական արտահագուստի և կոշիկների*** ձեռքբերումը:

***"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ***-ի կարիքների համար՝ ***բանվորական արտահագուստի և կոշիկների*** մատակարարման (որոնք կազմված են ***2*** չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ***(Հավելված N1),*** ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ ***(Հավելված N2):*** Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք ***գնման առարկայի*** դեպքում՝ ներկայացնում է համարժեք ***գնման*** առարկայի անվանումը և ծագման երկիրը (ըստ պահանջի):

***"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ***-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ mak@armwater.am:

Հեռախոս՝ (010) 54-28-76:

Պատվիրատու՝ ***"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ***

***Գործառնական տնօրեն*** ***Ա. Բիոլայ***

ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ 02509667

Գլխավոր գրասենյակ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վարդանանց փակուղի 8ա
Head Office
8A Vardanants blind alley,
Yerevan, 0010, Armenia

1-71
info@armwater.am